600.0394.09.12.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 դեկտեմբերի 2016 թվականի №394Ա

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի №638Ա ԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 13-Ի №333Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը, 2015 թվականի հունիսի 23-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության №ՀՕ-108Ն օրենքի 28-րդ հոդվածը, և հաշվի առնելով «Սևան-Հրազդանյան-ջրառ» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի նոյեմբերի 9-ի №423 և նոյեմբերի 10-ի №425 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝
   1) 2009 թվականի հոկտեմբերի 7-ի «Սևան-Հրազդանյան-ջրառ» փակ բաժնետիրական ընկերությանը ջրային համակարգի օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №638Ա որոշումը,
   2) 2014 թվականի օգոստոսի 13-ի ««Սևան-Հրազդանյան-ջրառ» փակ բաժնետիրական ընկերությանը ջրային համակարգի օգտագործման №0014 թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու մասին » №333Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
9 դեկտեմբերի 2016թ.